ՀԱՒՈՒՑ ԹԱՌԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉԸ
ԵՒ
ՆՈՅՆԱՆՈՒՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Ա.

Խաչի արուեստն ու պաշտամունքը Հայոց մէջ արժանի է յատուկ ուսումնասիրութեան. նա իւր զարգացման պատմութիւնն ունի, որպէս հետեւանք Հայ Եկեղեցու դաւանաբանական որոշ ուղղութեան։ Նորա ուսումնասիրութեան համար առատ նիւթ ունինք հայ արուեստի պատմութեան ամբողջ ընթացքում՝ Ե–ԺԷ. դարը՝ նոյն իսկ աւելի յետոյ՝ բազմատեսակ ելնդաւոր, հարթաքանդակ, գծական–երկրաչափական, ճարտարապետական խաչերով եւ խաչքարերով, նաև մանրանկարչական՝ ձեռագիրների մէջ, զարդարուած սիմվոլիկ, դեկորատիւ կամ պատմական մոտիւներով։ Մտադիր չլինելով այստեղ այդ նիւթը ուսումնասիրութեան առարկայ դարձնել իւր բովանդակ ծաւալով, որ հայ արուեստի զարգացման մի շատ կարեւոր մասը կ'կազմէր, կանգ կ'առնենք միայն նորա այն ձեւակերպութեան վերայ, որ Ամենափրկիչ անունն է կրում։

Հայոց մէջ հազուագիւտ են պատկերաւոր խաչերն ու խաչքարերը, և այդպիսիների կարգին են պատկանում Ամենափրկիչ կոչուածները, որոնցից հնագոյնը եւ հռչակաւորը Հաւուց Թառի նոյնանուն սրբութիւնն է, որ նոյնացրել են Աշոտ պատրկի արեւմուտքից ստացած փրկչական պատկերի հետ։ Ղեւոնդ պատմիչ խօսելով Աշոտ պատրկի (685–689) գործունէութեան մասին, յայտնում է նաև, թէ «չինէր զեկեղեցին Դարիւնից յիւրում ոստանին, եւ զկենդանագրեալ զպատկերն մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտից արեւու՝ մեծասքանչ զօրութեամբ հանգուցանէր ի նմա, և նորա անուամբ զեկեղեցին անուանեաց»(1)։ Ղեւոնդի խօսքերը, գրեթէ բառացի, կրկնում է եւ Ասողիկ(1)։ Վարդան յիշելով Դարիւնից եկեղեցու շինութիւնը Աշոտի ձեռքով «յանուն փրկչական պատկերին», աւելացնում է, «զոր եբեր որդի նորա ի մտից արեւու մասամբ և ի նաւակատիսն գրեաց Զորս ըստ պատկերին»(2)։ Այրիվանեցին միայն եկեղեցու շինութիւնն է յայտնում, առանց պատկերի խօսքն անելու. «Աշոտ զԴարօնից սուրբ Փրկիչն շինեաց»(3)։ Եկեղեցու շինութեան համար բոլորի սկզբնական աղբիւրը Ղեւոնդն է, իսկ սրա համար էլ, հաւանօրէն եկեղեցու շինութեան արձանագրութիւնը, որի հետ գրական առնչութիւն է նկատւում(4). միայն Վարդանն է, որ աւելի տեղեկութիւն է տալիս քան Ղեւոնդը և նորա հետեւողները «Զորս ըստ պատկերին» շարականի ծագման մասին։

Աշոտ պատրիկը Ղեւոնդի կողմից որակւում է որպէս «փոյթ յուսումնասիրութիւն» եւ Ասողկի կողմից որպէս «ուսումնասէր» մի իշխան. մենք առիթ ենք ունեցել ցոյց տալու, թէ ինչպէս սոյն Աշոտ պատրկի խնդիրքով Դաւիթ Հարքացի փիլիսոփան գրել է իւր հաւատոյ ճառերից մէկը՝ «Դաւթի փիլիսոփայի ի խնդրոյ Աշոտոյ պատրըկի» վերնագրով(5)։ Աշոտի կողմից առաջադրուած հարցերը եւ Դաւթի կարճառօտ լուծումը ապացոյց են, թէ իրօք այս պատրիկը պիտի լինէր ուսումնասէր եւ հետաքրքրուող՝ ժամանակը յուզող դաւանաբանական–փիլիսոփայական խնդիրներով, ուրեմն և անկարելի չէր, որ կարող լինէր մի շարական գրել կամ գրել տալ ժամանա-

(1) Պատմ. Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց. Բ. Տպ. Սպ. 1887, 16–18։

(1) Հրատ. Շահնազարեանցի. Փարիզ. 1859. 125.
(2) Հրատ. Էմինի. Մոսկվա. 1861. 99։
(3) Հրատ. Էմինի Մոսկվա. 1860. 51։
(4) Շահիսթունեան. Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւայլն. 1842. 62։
(5) Արարատ. 1906. 270։ 1907. 81. 274։